«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ *Անձի և պատասխանատու վարքագծի ձևավորմանն ուղղված մեթոդները առարկայի դասավանդման գործընթացում:*

Առարկան՝ *Հայոց լեզու և գրականություն*

Հետազոտող ուսուցիչ՝ *Մարիամ Գրիգորյան*

Ուսումնական հաստատություն՝ *Մասիսի միջնակարգ դպրոց*

Երևան 2023

Հետազոտական աշխատանքի վերաբերյալ հաշվետվություն	
Հետազոտությունն իրականացնող ուսուցչի տվյալներ	
Անուն, ազգանուն	*Մարիամ Գրիգորյան*
Աշխատավայրը(դպրոցի լրիվ անվանումը)	*Մասիսի միջնակարգ դպրոց*
Մասնագիտություն	Ուսուցչուհի
Հեռախոսահամար	093585354
Էլ. հասցե	mariamgrigoryan1962@gmail.com
Դասավանդվող առարկա (առարկաներ)	*Հայոց լեզու և գրականություն*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....
3
ԳԼՈՒԽ I. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԸ ՈՐՊԵՍ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇ 5
Մանկավարժական արվեստը որպես ուսուցչի անհատականության մի մաս 5
Մանկավարժական արվեստի գործառույթները հաղորդակցման
գործընթացում. Ուսուցիչը և աշակերտը՝ որպես դասի համահեղինակներ 8
ԳԼՈՒԽ II. ՈՒՍՈՒՑՉԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 12
Ուսուցչի գործունեության անհատական ոճը
մանկավարժական գործընթացում 12
Ուսուցչի դերասանական վարպետությունը ուսուցման գործընթացում 14
Հետազոտական աշխատանք՝ երեխայի դաստիարակության գործում
ուսուցչի դերասանական արվեստի դերի կարևորության ուսումնասիրության
ուղղությամբ.....
..16
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....
23
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՑԱՆԿ 25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին ժամանակներս հասունանում է այն պատկերացումը, որ մանկավարժությունըոչ միայն գիտություն է, այլև՝ արվեստ, ինչը նշանակում է, որ տվյալ գիտության միայնտեսականորեն իմացությունը բավարար չէ երեխաներին կրթելու ու դաստիարակելու գործում: Ուսուցիչը լավ մասնագետ լինելուց բացի պետք է լինի նմանը չունեցող արվեստագետ: Արվեստը միայն ինչ-որ բան գեղեցիկ, տպավորիչ կամ համոզիչ փոխանցելու ունակությունը չէ: Իրական արվեստը ուսուցչի՝ հեռանկարային խնդիրների կանխատեսմանև լուծման, թեմաների կերպարային և պատկերավոր ներկայացման, երեխայի ապագան նախագծելու, երևակայությունն ու ստեղծագործական կարողությունները զագացնելու, տրամաբանականը և գեղագիտականը ներդաշնակորեն համատեղելու ունակությունն է:Մանկավարժական արվեստը ուսուցչի ներաշխարհի հարստությունն ու գեղեցկությունն է:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ կրթության զարգացմանժամանակակից միտումները և ուսուցչի անհատականության նկատմամբ մասնագիտական բարձր պահանջները մեծացրել են ուսուցչի ստեղծագործական անհատականության ձևավորման, նրա ստեղծագործական կարողությունների իրականացման և գործունեությանանհատական ոճի զարգացման անհրաժեշտությունը:

Աշխատանքի **նպատակն** է ուսումնասիրել ուսուցչի դերասանական արվեստի դերի կարևորությունը մանկավարժական գործընթացում:

Նպատակից բխում են հետևյալ **խնդիրները**.

դիտարկել ուսուցչի մանկավարժական արվեստի դերը որպես նրա անհատականության մի մաս,

նկարագրել մանկավարժական արվեստի գործառույթները հաղորդակցմանգործընթացում,

ուսումնասիրել ուսուցչի գործունեության անհատական ոճը մանկավարժականգործընթացում,

բացահայտել ուսուցչի դերասանական վարպետությունը ուսուցմանգործընթացում,

հետազոտել ուսուցչի դերասանական վարպետության ընկալումը և կարևորությունը ուսուցիչների և աշակերտների շրջանում:

Աշխատանքի իրականացման ժամանակ օգտագործվել են հետևյալ **մեթոդները**.

սոցիոլոգիական հարցում,

մաթեմատիկական մեթոդ,

մասնագիտական գրականության ուսումնասիրության մեթոդներ։

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 2 գլուխներից, իրենց համապատասխանենթագլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից։

Առաջին գլխում, որը վերնագրված է «Մանկավարժական արվեստը որպես մասնագիտական և անձնական հատկանիշ», դիտարկվում է մանկավարժական արվեստի դերը որպես ուսուցչի անհատականության մի մաս, և ներկայացվում են մանկավարժական արվեստի գործառույթները հաղորդակցման գործընթացում՝ ուսուցչին և աշակերտին դիտարկելով դասի համահեղինակներ։

Երկրորդ գլխում, որն ունի «Ուսուցչի անհատական ստեղծագործական կարողությունների դերը մանկավարժական գործոնթացում» վերնագիրը, ներկայացված են ուսուցչի գործունեության անհատական ոճի և դերասանական վարպետության ուսումնասիրությունները։ Սույն գլուխը նվիրված է նաև հետազոտական աշխատանքին, որտեղ ներկայացվում են երեխայի դաստիարակության գործում ուսուցչի դերասանական արվեստի դերի կարևորության ուսումնասիրության ուղղությամբ հարցաթերթերի մշակման,հարցման, իրականացման և այդ հետազոտություններից ստացված արդյունքների վերլուծության և ամփոփման փուլերը։

ԳԼՈՒԽ Ի. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԸ ՈՐՊԵՍ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇ

Մանկավարժական արվեստը որպես ուսուցչի անհատականության մի **մաս**

Ուսուցչի համար անհրաժեշտ մասնագիտական որակների նկատմամբ ոչ միանշանակվերաբերմունքը, վեճերն այն մասին՝ արդյո՞ք ուսուցիչը պետք է տիրապետի մանկավարժական արվեստին, թե՞ ո՛չ, հանդիսանու՞մ է այն ուսուցչի պրոֆեսիոնալիզմի

ցուցիչ և, առհասարակ, ո՞րն է այս երևույթի էությունը, մեզ ստիպում են այս հարցը ավելի մանրակրկիտ դիտարկել։
Երբ դասակարգում են ուսուցչի այն որակները, որոնք կարևոր են նրամանկավարժական գործունեության համար, աշխատող մանկավարժներն ու ապագաուսուցիչները, իհարկե, առաջնահերթ են համարում ուսուցչի՝ առարկայական գիտելիքների ևմեթոդաբանության տիրապետումը, զարգացած մանկավարժական և հոգեբանական մտածողությունը։ Արտիստիզմը, շատ հաճախ, ոչ միայն չի ընդգրկվում ուսուցչին անհրաժեշտ որակների ցանկում, այլև, նույնիսկ, համարվում է մանկավարժական գործունեության վրա բացասաբար ազդող գործոն։ Ուսուցչի՝ մանկավարժական արվեստի կարևորության ժխտումը, թերևս, արդյունք է այն փաստի, որ, երկար ժամանակ ուսուցիչների փորձը ուսումնասիրելիս և նկարագրելիս, մանկավարժական արվեստը չի ուսումնասիրվել, անտեսվել է հետազոտողների կողմից, լավագույն դեպքում՝ մեկնաբանվել է որպես որոշակի մանկավարժական տաղանդին բնորոշ մի երևույթ. Դրա էությունը սահմանելու լուրջ փորձերչեն արվել: [Булатова 2001: 46]
Ուսուցչի խնդիրն է՝ հավատալ ինքն իրեն և իր ուժերին։ Այնպես անել, որ երեխաներն էլ հավատան, որ դասի ընթացքում տեղի ունեցող ամեն բան իրական է և ոչ թե՝ կեղծ։
Շ.Ա. Ամոնաշվիլին գրում է. «Եթե ես ուզում եմ, որ իրենց սեղանների մոտ նստած, աչքերիս մեջ նայող, ինձնից ինչ-որ կարևոր բան ակնկալող երեխաներն իսկապես վայելեն դպրոցական ամեն մի օրը, դաստիարակվեն և կրթվեն, չմտածելով, որ դաստիարակվում ու կրթվում են, ես պետք է հոգ տանեմ այն մասին, որ մեր գործնական հարաբերությունների թելը շարունակական և ամուր լինի... Ես պետք է համարձակություն հավաքեմ և խաղամ ուսուցիչ-դերասանի եզակի դերը: Եվ այս դերի էությունն այն է, որ իմ և երեխաների միջև գործնականհարաբերությունները չպետք է կորցնեն իրենց ճշմարտացիությունը և երեխաներին զրկեն ազատ ընտրության, դասընթացին մասնակցելու բացառիկության զգացողությունից»: [Амонашвили 1993: 154]
Կարևոր է տարբերակել «արվեստ» և «դերասանություն» հասկացությունները։ Իրական մանկավարժական արվեստն ունի դաստիարակչի հմտության, մանկավարժական ձգտման և հոգեբանական ճկունության տարր: Դերասանությունը կարելի անվանել կեղծ արտիստիզմ: Սա այն վարվելակերպն է, որով ուսուցիչը «պատկերում է» իրեն դասարանում՝խաղալով բարի և առատաձեռն անհատականություն, խոսում է հովանավորչական տոնով, հիանում աշակերտների նկատմամբ իր գերադասությամբ, խաղում է անսխալական ուսուցչի կերպար: Նման «արտիստիզմը» իսկապես դժվար է անվանել ուսուցչի համար անհրաժեշտ

որակ: Սկզբում սա կարող է «կաշառել» աշակերտին, ապա առաջացնել հիասթափություն ուսուցման նկատմամբ:
Մանկավարժական հմտություն ասելով պետք է հասկանալ հատկությունների բարձր մակարդակի արտահայտում, որոնք ուսուցիչը պետք է ունենա ըստ մասնագիտության, անհատականության առանձնահատկությունների: Մի համալիր, որն ապահովում է մասնագիտական գործունեության ինքնակազմակերպման բարձր մակարդակ, ինչպես նաև հետևանք է որոշ մանկավարժական որակների զարգացման բարձր մակարդակի: Այս հմտության հիմքը ուսուցչի ընդհանուր մշակույթն է, նրա տեսական գիտելիքները և մանկավարժական տեխնիկայի յուրացումը:
Մանկավարժական տեխնիկան հմտությունների այն համալիրն է, որն օգնում է ուսուցչին իր աշխատանքում հասնել օպտիմալ արդյունքների: Մանկավարժական տեխնիկայի տարրերի հիմքում ընկած են մանկավարժական հաղորդակցության հմտությունները, խոսքի տեխնիկան և կուլտուրան (ձայն, շնչառություն, կանխատեսում, ինտոնացիայի գունավորում, գրագիտություն և այլն), զգացմունքների և վերաբերմունքի արտահայտիչ ցուցադրում (դեմքի արտահայտություններ, մնջախաղ, ուսուցչի ընդհանուր տեսքը), ուսուցչի կողմից իր հոգեկան վիճակի մասնագիտական ինքնակարգավորումը (ինքնատիրապետում, դիմացկունություն և այլն): Կարող ենք ասել, որ մանկավարժական տեխնիկան «զարդարում է» տեղեկատվությունը, որը հաղորդում է ուսուցիչը: Սրանք այն հմտություններն են, որոնք օգնում են ուսուցչին իր մտքերն ու զգացմունքները աշակերտներին փոխանցելու, երեխաների ստեղծագործական վարքի և նրանց հետ արդյունավետ փոխգործակցության խթանմանը: [Булатова 2001: 47]
Մանկավարժական արվեստը մի երևույթ է, որը գործում է մանկավարժական ստեղծագործական գործընթացի բոլոր փուլերում: Արվեստի դերն ու տեղը դասավանդման մեջ կարող է փոխվել ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման հետ մեկտեղ: Այն կարող է դրսևորվել որպես անհատականության որակ, և, մասնագիտական փորձը կուտակվելիս, ընդգրկվել ուսուցչի աշխատանքի բոլոր բաղադրիչներում:
Ուսուցչի մանկավարժական արվեստի նպատակն է՝ ուսանողների վրա հուզական ազդեցություն ունենալ, որոշակի փորձ փոխանցել, առանց որի կյանքի խոր ընկալումը բարդանում է. երեխաների մտքերում և սրտերում հաստատել իրենց հանդեպ հավատ, ազդեցություն թողնել նրանց վերաբերմունքի, զգացմունքների վրա, զարգացնել երևակայությունը: Միևնույն ժամանակ, ուսուցչի հիմնական նպատակն է նպաստել ուսանողի անհատականության ձևավորմանը՝ հիմնված արժեքների համակարգի վրա, ձևավորել

որոշակի դրական վերաբերմունք ուսումնական գործընթացի, և, ընդհանուր առմամբ,շրջապատող աշխարհի նկատմամբ: [Булатова 2001: 49]

Մանկավարժական արվեստը՝ որպես երևույթ, անհատական և մասնագիտականհատկանիշ է: Այն կարելի է հասկանալ որպես.

1. ուսուցչի ինքնատիպություն,
2. դասավանդման տեխնիկայի ամբողջություն,
3. մանկավարժական ստեղծագործականության հայեցակարգ:

Ընդհանրապես, մանկավարժական արվեստը կարող է սահմանվել որպես օրգանականգոյության և մանկավարժական գործընթացի պայմաններում արդյունավետ գործունեությանկարողություն: Այս ունակությունը կապված է ուսուցչի գիտելիքների և նրա մանկավարժական մտածողության զարգացման, ինչպես նաև ինքնարտահայտման արվեստի տիրապետման հետ:

Մանկավարժական արվեստի կառուցվածքում հայտնաբերվել է երկու կողմ.

Ներքին արվեստ. Ուսուցչի կուլտուրան, ինքնաբերականությունն ու ազատությունը,հմայքը, հուզականությունը, երևակայությունը, շնորհը, խնդիրներ առաջադրելու և լուծելու երևակայական ձևը, ասոցիատիվ տեսլականը, դասի «սցենարում» անսպասելի պայծառ շարժումները (հատկապես դրա առաջին րոպեները), ստեղծագործությունը, ինքնատիրապետումը և այլն:

Արտաքին արվեստ. Խաղի ներկայացում, այսպես ասած, խաղի «տեխնիկա», նյութինկատմամբ վերաբերմունքի արտահայտման հատուկ ձևեր, հուզական վերաբերմունքը գործունեության տեղափոխելու, ինքնաներկայացման հմտության տիրապետումը: [Булатова2001: 95]

Ամփոփելով նշենք, որ արտիստը, բառի լայն իմաստով, իր արհեստի վարպետն է, վիրտուոզը, փորձագետը: Իսկ արտիստիզմը արվեստի կատարելագործման բարձրագույն մակարդակի գործունեությունն է ուսուցչի աշխատանքում, երբ դասերը հասնում են ցանկալիհոգևոր բարձրության: Այսպիսով, մենք սահմանեցինք «արվեստ» և «դերասանություն» հասկացությունները,ցույց տվեցինք մանկավարժական արվեստի, մանկավարժական հմտության ևմանկավարժական տեխնոլոգիայի տարբերությունները և, վերջապես, սահմանեցինք մանկավարժական արվեստի էությունը, նպատակը, կառուցվածքը և կարևորությունը մանկավարժական գործընթացում:

Մանկավարժական արվեստի գործառույթները հաղորդակցման
գործընթացում. Ուսուցիչը և աշակերտը՝ որպես դասի համահեղինակներ

Օպտիմալ մանկավարժական հաղորդակցությունը ուսուցչի և աշակերտների միջև շփումն է ուսման ընթացքում, որը լավագույն պայմաններն է ստեղծում սովորողների մոտիվացիայի զարգացման, ստեղծագործ անհատականության ձևավորման համար, ապահովում է ուսման դրական, հուզական մթնոլորտ և սոցիալ-հոգեբանական գործընթացների կառավարում, հնարավորություն է տալիս առավելագույնս օգտվել ուսուցչիանհատականության առանձնահատկություններից: Այսպիսով, մանկավարժական հաղորդակցությունը ուսուցիչների և աշակերտների միջև մանկավարժական փոխգործունեության և փոխազդեցության հիմնական միջոցներից մեկն է: [Булатова 2001: 68]
Աշակերտների համար կարևոր է ոչ թե կրթության բովանդակությունը, այլ այն իմաստը,որին հաղորդակից է դարձնում ուսուցիչը: Միևնույն ժամանակ, կարևոր է, թեարտահայտչական ինչ միջոցներ է օգտագործում ուսուցիչը՝ նյութի իմաստը պարզ և մատչելի դարձնելու և իր զգացմունքներն ու վերաբերմունքը երեխաների հանդեպ ցույց տալու համար:Տոնը, կեցվածքը, դեմքի արտահայտությունը, հեռավորությունը, որը ուսուցիչը ընտրում է սովորողների հետ հաղորդակցման ժամանակ, փոխանցում են այն ամենը, ինչը բառերով արտահայտել անհնար է: Աչքի շփումը շատ կարևոր է: Հայացքը կարող է համարժեքլինել պատժի: Բայց այն կարող է լինել նաև պարգև, եթե ուղեկցվի ժպիտով, - նշում է Կ.Մ. Լևիտան: Ռ. Բեռնը գրում է, որ ուսուցչի ինտոնացիան, ժեստերը, հայացքը, կեցվածքը և նրակողմից արտահայտված վերաբերմունքը ոչ միայն լեզու են, այլև կրթության բովանդակությանեներկայացման ձև: Ուսանողի ինքնորոշման գաղափարի ձևավորման և նրա զարգացման համար սովորողների ըմբռնումը պակաս կարևոր չէ, քան ուսուցման բովանդակությունը հասկանալը: [Булатова 2001: 73]
Պ. Բյորնը իրավամբ նկատել է, որ դաստիարակության և մանկավարժական հաղորդակցման մեջ միշտ էլ շեշտադրվել է հուզականությունը, սակայն, եթե նախկինում հետաքրքրում էին բացասական հույզերը, օրինակ, վախը՝ պատժից, անհաջողությունից, ապա այսօր մեծ ուշադրություն է դարձվում դրական հույզերի զարգացման ու ներգործության ռաումնասիրությունների վրա: Մանկավարժական մասնագիտական կրթության կազմակերպման գործընթացում փոխառելով դերասանական վարպետության տարրեր՝ այժմկարելի է ձևավորել որոշակի տեխնոլոգիաներ, որոնք ապագա մանկավարժին կօգնեն

տիրապետելու այնպիսի կարևոր հմտությունների, ինչպիսիք են՝ դերասանական արտահայտչականությունը, մի կողմից՝ տրամաբանականը, մյուս կողմից՝ պատկերավորը ներդաշնակելու և համատեղելու կարողությունը, լսարանի ուշադրությունը գրավելու և ազդելու հնարների տիրապետումը, անձնական ստեղծագործական ինքնաճանաչողությունը,երեխաների հետ փոխհարաբերությունների ժամանակ հոգեֆիզիոլոգիական համակարգը կառավարելու կարողությունը, հռետորական արվեստի հնարների կիրառմամբ՝ հանրային ելույթներ ունենալու ունակությունը և այլն: [Շահբազյան 2009: 214]

Մանկավարժական հաղորդակցության գործընթացում ուսուցչի արվեստը կատարումէ հետևյալ գործառույթները.

Մոտիվացիոն գործառույթ. Սա իրականացվում է դասընթացներին նախապատրաստվելու և բուն ուսուցման գործունեության ընթացքում, երբ ուսուցչի արվեստը կարևոր դեր է խաղում ուսանողի համար՝ օգնելով բարձրացնելուսման ճանաչողական շարժառիթը, թույլ տալով համատեղել փաստացի գիտելիքները նրանց հուզական ընկալման հետ և ձևավորել համոզմունքներ աշխարհի մասին։

Համակենտրոնացման գործառույթ. Այս գործառույթն իրականացվում է հիմնականում դասի նախապատրաստման փուլում, երբ ուսուցիչը փորձում է ազատվել լարվածությունից, դրական հույզեր ներշնչել՝ այդ կերպ դիմակայելով սթրեսին, և իրեն հատուկ վստահության միջոցով՝ ստիպել երեխաներին հավատալուսուցման գործընթացի նշանակալից հաջողությանը:

Զգողականության գործառույթ. Արտիստիզմը օգնում է ուսուցչին ազդել ինքն իրեն՝որպես անհատականության, և իր գործողությունների ընկալման սոցիալ- հոգեբանական մեխանիզմի վրա: Երեխաների համակրանքը կամ հակակրանքը ուսուցչի նկատմամբ կախված է ուսուցչի թողած «առաջին տպավորությունից»:

Դյուրացման գործառույթ. Մանկավարժական արվեստը հեշտացնում է ուսուցչի նաշակերտի միջև փոխգործակցությունը, նպաստում է օտար մշակույթի, կարծիքի,համոզմունքի հանդեպ հանդուրժողականության ձևավորմանը։ Աշխարհի ներեխաների առջև թափանցիկ լինելու դրսևորումը թույլ է տալիս երեխաներին չվախենալ ուսուցչից և ցանկացած պարագայում դիմել վերջինիս։

Խթանման գործառույթ. Այստեղ էական նշանակություն ունի ուսուցչի ստեղծագործական բարեկեցության և աշակերտների ստեղծագործական գործունեության խթանումը, որի արդյունքում մշտական փոխազդեցության և

փոխգործունեության մեջ լինելով ուսուցչի վառ ստեղծագործական անհատականության հետ, աշակերտները ճանաչում են արվեստը։

Միասնության գործառույթ. Երբ ուսուցչի գործունեությունը բնութագրվում է անձնական դրսևորումների հարստությամբ, էքսցենտրիկությամբ, աշակերտներինկատմամբ վերաբերմունքով։ Համատեղ գործելու և ստեղծելու մթնոլորտըուսուցչին և աշակերտներին միավորում է ընդհանուր նպատակի շուրջ։ [Булатова2001: 75]

Սրանից կարելի է ենթադրել, որ նշված գործառույթները գործնական կապ են ստեղծում ուսուցչի և աշակերտների միջև՝ հիմնված փոխադարձ վստահության և հարգանքի վրա։

Այսպիսով, մանկավարժական հաղորդակցումը մանկավարժի կողմից կոնտակտի հաստատումն է սովորողների հետ դաստիարակչական նպատակներով, գրել է Ի. Պոդլասիյը։Կոնտակտի տակ հասկացվում է հետադարձ կապ, գործողությունների և վարքի փոխադարձհամաձայնեցվածություն, որտեղ կարևորվում է կոնտակտի հաստատումն ու դաստիարակչական նպատակը։ Մանկավարժական հաղորդակցման ժամանակ ոչ միայնընկալվում է ամբողջ տեղեկությունը աշակերտի կողմից, այլև ինքն է ստեղծագործում այդ տեղեկության հրման վրա, կատարում որոնումներ, եզրահանգումներ, ստեղծում նորը և իր ստեղծածը հաղորդում մանկավարժին ու մյուս աշակերտներին։ [Ալեքսանյան 2015: 186] Իսկ մանկավարժական արվեստի գործառույթները միմիայն ամրապնդում են ուսուցչի նաշակերտի կապը՝ ուղղված միևնույն նպատակի իրագործմանը։

ԳԼՈՒԽ II. ՈՒՍՈՒՑՉԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ուսուցչի գործունեության անհատական ոճը մանկավարժական

գործընթացում

Մանկավարժական գործընթացում ուսուցչի առաջնային կարևորության խնդիրը սովորողներին իր գիտելիքները փոխանցելն է՝ լուսավորելով նրանց միտքը, ձևավորելովգիտական աշխարհայացք, ապահովելով համակողմանի ու ներդաշնակ զարգացում և դաստիարակություն։ Սակայն վերոնշյալ խնդիրն իրագործելու համար ուսուցչի՝ որպես

մասնագետ պրոֆեսիոնալ լինելը, բավարար միջոց չէ: Այստեղ էական նշանակություն ունիուսուցչի գործունեության անհատական ոճը: Նախևառաջ ուսուցիչը ինքը պետք է լինի եզակի,տարբերվող, իր նմանը չունեցող պայծառ անհատականություն, ով ի զորու կլինի ոչ միայն սնել երեխաներին գիտելիքներով, այլև ձևավորել ու զարգացնել նրանց ստեղծագործական միտքը:Ներկայումս հասարակության համար ավելի ընդունելի է դարձել այն միտքը, որ
կրթությունն անհատին լուսավորելու ճանապարհից պետք է վերածվի ստեղծագործական անհատականության, նրա անհատական ունակությունների և տաղանդների զարգացման մեխանիզմի: Մարդ, որն ունակ է ինքն իրեն կերտելու, իր կյանքի մարտավարությունը սահմանելու և փոխելու: Այս նպատակին հասնելն անհնար է առանց ստեղծագործական անհատականություն ունեցող ուսուցիչների: Իրո՛ք, որպեսզի ուսուցչի ջանքերն արդյունավետ լինեն, նրա էրուդիտը, մեթոդական հմտությունը և կրթական տեխնոլոգիայի հաջող ընտրությունը բավարար չեն: Անհրաժեշտ է, որ ուսանողը ուսուցչին ընդունի որպես պայծառ,եզակի անհատականություն: (Булатова, 2001:10)
Լայն իմաստով, ստեղծագործ անհատ կարող է համարվել այն անձը, որն ունի հարուստներաշխարհ, իրեն հատուկ բնավորության գծեր, ինչպիսիք են՝ ինքնավարությունը, ինքնատիպությունը, ստեղծագործական կողմնորոշումը, իր համոզմունքներին և արժեքներին մինչև վերջ հավատարիմ մնալու պատրաստակամությունը: Որքան ավելի ինքնուրույն է մարդն իր գործունեության մեջ՝ իր առջև նպատակներ դնելու և դրանց հասնելու համար անհրաժեշտ միջոցներ փնտրելու ու արդյունքը գնահատելու հարցում, այնքան ավելիլավ կարող է բնութագրվել որպես ստեղծագործող անհատականություն:
Բարդ է սահմանել «ուսուցչի ստեղծագործական անհատականություն»հասկացությունը, քանի որ այն հատուկ որակ է, որը բնորոշ է անձի՝ որպես անհատականություն զարգացման մակարդակին: Դրա էությունը, ինչպես անձի ինքնատիպության և ամբողջականության մեջ է, այնպես էլ՝ ուսուցչի գործունեության, մանկավարժական նպատակների ու խնդիրների ինքնավարության ու գործողությունների անկախության: Ուսուցչի ստեղծագործական անհատականությունը դրսևորվում է այնպիսիբովանդակային ասպեկտներում, ինչպիսիք են՝ կողմնորոշումը, անձնային որակները և ճանաչողական ոլորտը: Այսինքն՝ բոլոր այն արժեքները, մտավոր որակների և գործընթացների դրսևորումները, մտածողության բովանդակությունը և մակարդակները, որոնք ամփոփվում են մեկ կերպարի մեջ:
Նշանակալից գործոն է ուսուցչի հոգեբանության ճանաչողական ոլորտը: Ստեղծագործական լուծումները բնութագրելու համար կարևոր է, թե ինչպես է ուսուցիչն

արդարացնում իր որոշումները: Այստեղ կարելի է նկատի ունենալ արդարացման երկուտեսակ՝ տրամաբանական (կամ վերլուծական) և փոխաբերական-ինտուիտիվ: Այս կամ այն գործունեության հաջողությունը, դրա արդյունավետությունը կախված է նրանից, թե որքանով է լիարժեք ձևավորվում նրա առարկայի գործունեության անհատական ոճը, այսինքն՝ որքանարդյունավետ և նպատակահարմար են օգտագործվում անձի անհատականության կայուն բնութագրերը: Այսպիսով, ուսուցչի գործունեության անհատական ոճը ուսուցչի նախընտրածմեթոդների համակարգն է, նրա մտածելակերպը, հաղորդակցության ձևը, պահանջներ դնելուև կոնֆլիկտները լուծելու եղանակները: Ուսուցչի անհատական գործունեության ստեղծագործական ոճը և՛ ընդհանուր է (մանկավարժական կողմնորոշում, մանկավարժական ունակություններ, հոգեբանական և մանկավարժական օրինաչափություններ օգտագործելուգիտելիք և կարողություն, հոգեբանական դիտարկում, մանկավարժական մարտավարություն), և՛ առանձնահատուկ, շատ առումներով՝ եզակի: (Булатова, 2001:15) Այսպիսով, ուսուցչի գործունեության անհատական ոճը կարելի է դիտարկել ինչպե՛ս «ներքին», այնպե՛ս էլ «արտաքին» կողմից: Առաջին դեպքում ուսուցչի գործունեության ոճը անհատականության զարգացման աստիճանն է, նրա վերաբերմունքը մանկավարժական գործունեությանը որպես կոչման, ինքնաիրացման անհրաժեշտության ու ունակության: Ուսուցիչը բնութագրվում է այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են մտքի շնորհը,զգացմունքների «թարմությունը», ինքնավստահությունը, համամասնության զգացումը և այլն: Երկրորդ դեպքում ուսուցչի գործունեության ոճը դրսևորվում է իրեն հատուկ ինքնատիպությամբ, ինքն իրեն կերտելու շնորհով, արտահայտչականությամբ, եզակի անհատականությամբ, ուսումնական գործընթացի ընթացքում իր «ես»-ը «թափանցիկ» դարձնելու ունակությամբ, բովանդակության, մեթոդների ճիշտ ընտրությամբ ու ներկայացմամբ, ուսանողների հետ շփման ոճով, դասի տեմպով, և, ինչու չէ, նաև դասի ընթացքում իմպրովիզի ազատության թույլատրված աստիճանով:

Ուսուցչի դերասանական վարպետությունը ուսուցման գործընթացում

Մանկավարժությունը շատ ընդհանուր գծեր ունի թատրոնի հետ: Ե՛վ մանկավարժները, և՛ դերասաններն աշխատում են մարդկանց հետ՝ ունենալով մեկ նպատակ. Հուզել նրանց միտքն ու հոգին: Մանկավարժությունն ու թատրոնը սովորեցնում ու կրթում են՝ պահանջելովբարձր մակարդակի ֆիզիկական, մտավոր և սոցիալական մշակույթ: Այն, ինչն ամենից շատէ գրավում այս երկու մասնագիտություններում, ստեղծագործող անհատի և ստեղծագործ

աշխատանքի եզակի զուգադիպության գործոնն է: Քանի որ երկու աշխատանքներն էլ արվեստի ինքնարտահայտման վառ ձևեր են:

Մանկավարժական և դերասանական տեխնիկայի շփման հիմնական կետերն են.

Գործունեության ընդհանուր սկզբունքներին ապավինելը. Ինչպես գիտեք, Կ. Ս. Ստանիսլավսկու համակարգը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից. Թատրոնի գեղագիտության սկզբունքները, դերասանի էթիկայի դոկտրինը և դերասանական տեխնիկան՝ որպես գործողությունների արտահայտչականության տիրապետում: Ուսուցչի գործունեության դեպքում, նույնպես, համատեղելի են գեղագիտությունն, էթիկան ևտեխնիկան: Ուսուցչի կողմից իր բարձր հոգևոր նպատակի և քաղաքացիական պարտքի կատարումը անքակտելիորեն կապված է նրա բարոյականության, վարքի և երեխաների հանդեպ վերաբերմունքի զարգացման և կատարելագործման մշտական աշխատանքի հետ:

Մանկավարժական ոլորտում թատերական արվեստի բնագավառի տերմիններիօգտագործումը.

Դասավանդման դրամայի մեջ, որը միավորում է մանկավարժական և բեմական օրենքները, հասկանալի է դառնում «էքսպոզիցիա», «սկզբնակետ»,
«գագաթնակետ», «ինտրիգ» հասկացությունների իմաստը: Եթե այդ բաղադրիչներից որևէ մեկը բացակայում է, դասի ընթացքում սթրեսի դաշտի ներուժը ընկնում է, և դրա հետ մեկտեղ հետաքրքրությունը դասի նկատմամբ, արդյունքում՝ առարկայի նկատմամբ:
Թատերական մանկավարժության ոլորտի վարժությունների օգտագործումը՝հարմարեցված ուսուցողական գործունեությանը՝ զարգացնելու մարդու վարքի առանձնահատկությունները և հաղորդակցության մեջ փոփոխականությունը ընկալելու և արտահայտելու կարողությունը: (Булатова, 2001:19)
Թատերական արվեստի ամենազարմանալի հատկություններից մեկը մարմնացումն է:Բ.Լ. Պաստեռնակը գրել է, որ տեսարանը «դերասանից կարդալ չի պահանջում, այլ՝ լուրջ մահ»: Իսկ ուսուցի՞չը. Արդյո՞ք նա անկասկած պետք է «լրջորեն մեռնի», թե՞ հնարավոր է արհեստավարժորեն պաշտպանվել իրենից՝ խաղի բարձր որակով, մի շարք տեխնիկայով, որըթույլ է տալիս մեկին ուրիշներին հուզել սեփական մտքի խաղաղությամբ: Այստեղ անհրաժեշտէ առանձնացնել «արվեստ» և «դերասանություն» հասկացությունները: Ճշմարիտ արվեստըոչ միայն պահանջում է, պատկերավոր ասած, «լուրջ մահ», այլ պարզապես անհնար է առանցայդպիսի «զոհաբերության», քանի որ դա համոզիչ չի լինի կենդանի իրականության փոխանցման մեջ, որը պետք է մարմնավորվի արվեստում: Մյուս կողմից՝ դերասանական գործունեությունը հիմնականում ընդունակ է գծեր դնել դերի և կատարողի միջև: Այն

հիշեցնում է իրական ներքին վիճակը ծածկող դիմակ, այլ կերպ ասած, ոչ թե «լինելը» ամբողջչափով, այլ միայն «թվալը»:
Ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպումը ուսուցչից պահանջում էդերասանական վարպետություն, «դեր խաղալու» ունակություն, տարբերվելու ունակություն՝միաժամանակ իր «Ես»ին հավատարիմ մնալով: Չգիտես ինչու, խոսելով մանկավարժականարվեստի մասին, առավել հաճախ ուշադրություն են դարձնում հետևյալ երևույթին՝ «լինել տարբեր»: Իրո՛ք, դա ավելի արդյունավետ է, բայց ենթադրում է անցանկալի միջոցների՝
«հնարքի» կիրառում: Սակայն միայն իր անհատականությունը պահպանելով՝ ուսուցիչը կարող է ժամանակավորապես դնել ցանկացած «դիմակ»: Միևնույն ժամանակ, դա չի ճնշելու անհատականությունը, ընդհակառակը, ուսուցչի անհատականությունը դրա միջոցով ակնհայտորեն «փայլելու է»: Այսպիսով, արտիստիզմը միայն ինչ-որ մեկի խաղը չէ: Սա առաջին հերթին հոգեվիճակ է, որը կարող է որոշ ժամանակով ոչ միայն ինչ-որ մեկին «թվալ»,այլ իսկապես «լինել»: Միևնույն ժամանակ վերամարմնավորման գործընթացները դառնում են խորը, բնական, ամեն ինչ անկեղծ է, բոլոր հույզերն իրական են:
Ամփոփելով՝ նշեմ, որ դերասանական վարպետության տարրերը ուսուցիչներին սովորեցնելու միակ վտանգը նրանում է, որ ուսուցիչները կարող են ցուցաբերել ոչ անկեղծ, շինծու վարք: Կարևոր է չչարաշահել դերասանական հնարքների կիրառումը պրակտիկայում, այլ, դրա հետ մեկտեղ, լինել բնական ու անկեղծ երեխաների հետ: Դերասաններին սովորեցնում են դերեր խաղալ, սերմանում են կարողություն՝ կերտելու իրենք իրենց ցանկացած կերպարում: Ուսուցիչը, սակայն, հիմնականում պետք է սովորի «կարդալ», այսինքն հասկանալ իր և աշակերտի պահվածքը և կարողանալ օգտագործել այդ «գրագիտությունը»՝ ստեղծելու պայմաններ, որոնք բացահայտում ու ոգեշնչում են աշակերտին:

Հետազոտական աշխատանք՝ երեխայի դաստիարակության գործումուսուցչի դերասանական արվեստի դերի կարևորության ուսումնասիրության
ուղղությամբ

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ուսուցչի դերասանականվարպետության կարևորության ըմբռնումը ուսուցիչների և աշակերտների շրջանում: Պարզել՝ արդյո՞ք ուսուցիչը պետք է ունենա դերասանական հմտություններ և կիրառի դրանք իր աշխատանքում, թե՞ ո՛չ:

Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները.

սոցիոլոգիական հարցում,

մաթեմատիկական մեթոդ։

Հետազոտությանը մասնակցել է թվով 40 ուսուցիչ և 40 աշակերտ։ Հետազոտության շրջանակում առաջադրվել են ուսուցչի «դերասանական արվեստին» վերաբերող հարցեր, որոնց տրվել են սահուն և հստակ պատասխաններ։

Հետազոտական աշխատանքի արդյունքների վերլուծություն և ամփոփում.

Ուսուցիչների հետ անցկացրած հետազոտության տվյալների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսուցիչների մեծամասնությունը մեծ տեղ և նշանակություն է տալիս դերասանական վարպետությանը և կիրառում այն պրակտիկայում։ Իսկ աշակերտների հետանցկացրած հետազոտության տվյալների ուսումնասիրությունը և նրանց դիտարկումները հաստատեցին, որ ուսուցիչները, իսկապես, տիրապետում և կիրառում են դերասանական արվեստի հմտություններ ուսումնական գործընթացում։

Հարցում ուսուցիչների շրջանում.

Գծապատկեր 1.



Հարցման մասնակիցների 60%-ը գտնում է, որ նշված երեք տարբերակներն էլ իրենց մեջ ներառում են հասկացության բովանդակությունը։ 17,5%-ի կարծիքով դերասանական արվեստը երևակայության, տրամաբանության և գեղագիտական մոտեցման ամբողջությունն է, 10%-ը՝ ներաշխարհի հարստության և գեղեցկության, 7,5%-ը՝ թեմաների կերպարային, պատկերավոր ներկայացումը և միայն 5%-ը նշել է «այլ» տարբերակը։

Գծապատկեր 2.

Ինչպե՞ս է այն դրսևորվում:

40 ответов



45%-ի կարծիքով դերասանական արվեստի դրսևորումը կախված է փոխանցվող նյութից և դասարանի առանձնահատկություններից: 27,5%-ը գտնում է, որ այն մարդկային բոլոր դրսևորումների արտահայտում է, 12,5%-ը՝ դիմախաղի և ժեստերի, 10%-ը՝ խոսքի և ձայնի և, կրկին, միայն 5%-ը ընտրել է «այլ» տարբերակը:

Գծապատկեր 3.

Ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ սովորողների ուսումնական գործընթացի վրա:

40 ответов

Միանշանակ պատասխան. Բոլոր մասնակիցները գտնում են, որ դերասանական վարպետությունը միմիայն դրական ազդեցություն է ունենում սովորողների ուսումնական գործընթացի վրա:

Գծապատկեր 4.

Ուսուցիչը պե՞տք է, արդյոք, տիրապետի այս արվեստին:

40 ответов



97,5% մասնակիցների կարծիքով՝ դերասանական վարպետությունը պետք է կազմիուսուցչի հմտությունների մի մասը: Եվ միայն 5%-ն է այն համարում անհրաժեշտ հմտություն:

Գծապատկեր 5.

Ինքներդ կիրառու՞մ եք այն պրակտիկայում:

40 ответов



Եվ այստեղ ունենք կրկին նույն պատկերը. Մասնակիցների 97,5%-ը կիրառում էտվյալ հմտութունը իր պրակտիկայում, իսկ 5%-ը՝ ո՛չ:

Հարցում աշակերտների շրջանում.
Գծապատկեր 1.

57,5% աշակերտների կարծիքով դերասանական արվեստը թեմաների պատկերավոր ներկայացումն է, 35%-ի համար՝ ազդեցիկ ու համոզիչ արտահայտվելու ուննակությունը, իսկ7,5%-ի համար՝ հասկացությունն ունի լրիվ այլ նշանակություն։

Գծապատկեր 2.



65%-ի կարծիքով դերասանական արվեստը մարդկային բոլոր դրսևորումների արտահայտում է, 20%-ը գտնում է, որ այն դրսևորվում է դիմախաղի և ժեստերի միջոցով, 10%-ը՝ խոսքի և ձայնի, իսկ միայն 5%-ը ընտրել է «այլ» տարբերակը։

Գծապատկեր 3.

Ուսուցիչը պե՞տք է տիրապետի այս արվեստին:

40 ответов



Աշակերտների 92,5%-ի կարծիքով՝ ուսուցիչը պետք է տիրապետի դերասանական արվեստին, իսկ 7,5%-ը դժվարացել է տալ ստույգ պատասխան տվյալ հարցի վերաբերյալ:

Գծապատկեր 4.

Ձեր ուսուցիչները կիրառու՞մ են այն դասի ընթացքում:

40 ответов



Աշակերտների 52,5%-ը փաստում է, որ իրենց ուսուցիչները ոչ միայն տիրապետում են,այլև կիրառում են դերասանական վարպետության հմտությունը ուսուցման գործընթացում:32,5%-ը դժվարացել է ստույգ պատասխան նշել, իսկ 15%-ը փաստել է, որ իրենց ուսուցիչներըչեն կիրառում տվյալ հմտությունը դասի ընթացքում:

Գծապատկեր 5.

Ի՞նչն եք առավել կարևորում Ձեր ուսուցիչների կատարած աշխատանքում:

40 ответов

Աշակերտների 65%-ի կարծիքով՝ ուսուցչի աշխատանքում կարևոր են բոլոր նշված պատասխանները: Սակայն 15%-ը կարևորում է ուսուցչի՝ դասի անցկացման սեփական ոճը,իսկ մյուս 15%-ը՝ ուսուցչի ցուցաբերած անձնային որակները, և միայն 5%-ը՝ մասնագիտական կարողություններն ու հմտություններն: Այսպիսով, ուսուցիչների և աշակերտների շրջանում «Ուսուցչի դերասանական արվեստի դերը որպես երեխայի դաստիարակության գործոն» թեմայով անցկացվածհետազոտական աշխատանքի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ուսուցչի կողմից դերասանական հմտությունների յուրացումը և կիրառումը պրակտիկայում անհրաժեշտ են, քանի որ բխում են և՛ ուսուցիչների, և՛ աշակերտների շահերից: Ուսուցիչների մեծամասնությունը հստակ պատկերացում ունի ուսուցչի՝ «դերասանական արվեստ» հասկացության և դրա դրսևորման ձևերի մասին, կարևորում ու կիրառում է այն պրակտիկայում: Աշակերտների մեծ մասը առանձնահատուկ ուշադրություն է դարձնում դերասանական վարպետությանը՝ համարելով այն ուսուցչի աշխատանքի անհրաժեշտ բաղադրիչներից մեկը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշխատելով տվյալ թեմայի շուրջ՝ եկանք հետևյալ եզրահանգումների.

Մանկավարժական արվեստը կազմում է ուսուցչի անհատականության մի մասը: Այն ենթադրում է ուսուցչի բաց և անմիջական անհատականություն, հստակ խոսելու և գործելու, ներաշխարհի գեղեցկությանն ու հարստությանը մասնակից դարձնելու և իր ուրախությամբ մնացածին վարակելու ունակություն:
Մանկավարժական հաղորդակցությունը ուսուցիչների և աշակերտների միջև մանկավարժական փոխգործունեության և փոխազդեցության հիմնական ձևերից մեկն է, իսկ ուսուցչի արվեստը, լինելով մանկավարժական հաղորրդակցության գործընթացի բաղկացուցիչ մաս, կատարում է մոտիվացիոն, համակենտրոնացման, ձգողականության, դյուրացման, խթանման և միասնության գործառույթներ:
Ուսուցչի գործունեության անհատական ոճը կարևոր գործոն է մանկվարժականգործունեության արդյունավետության համար: Այն կարելի է դիտարկել ներքին և արտաքին կողմից: Առաջին դեպքում ուսուցչի գործունեության ոճը անհատականության զարգացման աստիճանն է, իսկ երկրորդ դեպքում ուսուցչիգործունեության ոճը դրսևորվում է իրեն հատուկ ինքնատիպությամբ և ինքն իրեն կերտելու շնորհով:
Ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպումը ուսուցչից պահանջումէ դերասանական վարպետություն, այսինքն՝ «դեր խաղալու», տարբերվելուունակություն և, միաժամանակ, իր «Ես»ին հավատարիմ մնալու կարողություն:
Հետազոտությունը ևս մեկ անգամ ապացուցեց ուսուցչի՝ մանկավարժական և դերասանական արվեստներին տիրապետելու անհրաժեշտությունը նվերջիններիս՝ ցանկալի կիրառումը ուսուցման գործընթացում: Ուսուցիչը պետքէ տիրապետի դերասանական արվեստին մի քանի պարզ պատճառով.

1. Ուսուցչի կողմից կիրառվող դերասանական հմտությունները զարգացնում ենսովորողների ֆիզիկական, ճանաչողական և բարոյական ունակությունները,
2. թույլ չեն տալիս, որ սովորողները շատ շուտ ձանձրանան ու անուշադիր լինենդասի ընթացքում,
3. ուսուցչի խոսքը դարձնում են հետաքրքիր, տպավորիչ, արտահայտիչ, համոզիչև հուզական,
4. օգնում են սովորողների ստեղծագործական խորը անհատականացման,մարդկային արտահայտչականության բնույթի կերտման գործում,

5. ինտենսիվացնում են ուսուցումը և արագացնում նրա տեմպը՝ շարժառիթ հանդիսանալով սովորողների ուսումնական գործունեության լավագույնարդյունքի դրսևորման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ալեքսանյան Ա. Ս., Միջանձնայինհաղորդակցման իրականացումը կրթական գործընթացում, Երևան, 2015 թ.:

2. Շահբազյան Ա. Մ., Ուսուցչի դերասանական արվեստը՝ երեխայի դաստիարակությանգործոն, Երևան, 2009 թ.:

3. Амонашвили Ш. А., Педагогическая симфония, Екатеринбург, 1993.4. Булатова О. С., Педагогический артистизм, М., 2001.

5. Берн Р., Развитие Я-концепции и воспитание, М., 1986.